ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 6 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի տնօրեն Բորիս Վանյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի տնօրեն Բորիս Վանյանը 29.03.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված» դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի վիճարկվող դրույթի սահմանադրականության հանգամանքը մինչ այդ քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-765 որոշումով:

Այսպիսով, դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի հիշատակված որոշումը, իսկ նմանօրինակ պայմաններում բացակայում են գործը քննության ընդունելու օրենքով սահմանված հիմքերը:

Բացի դրանից, սույն անհատական դիմումի ուսումնասիրությունը վկայում է նաեւ, որ այն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ կետ/:

Տվյալ գործի նյութերից, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 04.03.2010թ. որոշումից ակնհայտ է, որ դիմողը դեռեւս չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, քանի որ նրա կողմից վճռաբեկ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ եւ այն վերականգնելու մասին միջնորդության բացակայությամբ: Դիմողը կարող է կրկին դիմել ՀՀ վճռաբեկ դատարան, այդ թվում եւ խախտված ժամկետի վերականգման միջնորդությամբ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով, 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի տնօրեն Բորիս Վանյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 ապրիլի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-13